

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

16 ԲՇ. ՍՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ՝ ԻԳՆԱՏԻՈՍԻ, ԱԴԴԵԻ ԵՒ ՄԱՐՈՒԹԱՅԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱԶԻՆ
ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 4.9-16** Ինծի այնպես կը թուի, թէ
Աստուած մեզ՝ առաքեալներս մարդոց մէջ յետին դասեց,
մահապարտներու պէս, եւ մենք տեսարան եղանք ամբողջ
աշխարհին, թէ՛ հրեշտակներուն եւ թէ՛ մարդոց: Մենք Քրիստոսի
սիրոյն «յիմար» եղանք, իսկ դուք հազիւ Քրիստոսի միացած՝
իմաստո՞ւն եղաք. մենք՝ տկար, իսկ դուք՝ հզօ՞ր. մենք՝ անարգ, իսկ
դուք փառաւո՞ր: Մինչեւ օրս յաճախ անօթի ալ կը մնանք, ծարաւ ալ,
կիսամերկ ալ. յաճախ ծեծի կ'ենթարկուինք, բնաւ մնայուն կայք
չունինք, եւ մեր հացն ալ սեփական աշխատանքով կը ճարենք:
Մարդիկ կը հայհոյե՞ն մեզի, մենք կ'օրհնենք: Կը հալածե՞ն մեզ, կը
համբերենք: Կը վարկաբեկե՞ն մեզ, մենք ազնուութեամբ կը
պատասխանենք: Ամբողջ աշխարհին նախատինքին թիրախ
դարձանք եւ բոլորին անարգանքին առարկան եղանք մինչեւ օրս:
Այս բաները կը գրեմ՝ ոչ թէ ձեզ ամօթով ձգելու, այլ՝ խրատելու
համար ձեզ, որպէս իմ սիրելի որդիներս: Որովհետեւ նոյնիսկ եթէ
բիւրաւոր դաստիարակներ ունենաք, ձեզ Քրիստոսի առաջնորդելու
համար, բայց ինձմէ զատ հայր չէք կրնար ունենալ, որովհետեւ ես
էին որ Աւետարանին քարոզութեամբ ձեզի հայր եղայ՝ որպէսզի
Քրիստոս Յիսուսի պատկանիք: Հետեւաբար, կը խնդրեմ ձեզմէ, ինծի
նմանեցէք:

**ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 9.33-37** Կափառնաւում եկան: Երբ տուն մտան,
Յիսուս հարցուց իր աշակերտներուն.- Ի՞նչ բանի մասին կը
վիճաբանէիք ճամբու ընթացքին:
Անոնք լուռ մնացին, որովհետեւ ճամբու ընթացքին իրարու հետ կը
վիճաբանէին թէ ով է մեծը: Երբ նստաւ, կանչեց տասներկու
աշակերտները եւ ըսաւ անոնց.- Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ՝ թող
բոլորին վերջինը եւ բոլորին սպասաւորը ըլլայ:

Ապա փոքրիկ մը առաւ, անոնց մէջտեղ կանգնեցուց եւ զայն գրկելով ըսաւ.- Ով որ այսպիսի փոքրիկ մը իմ անունովս ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ո՛չ թէ զիս, այլ զիս ղրկողը ընդունած կ'ըլլայ:

**17 ԳՇ. ՍՐԲՈՑՆ՝ ԹԵՈՊՈՍՊԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԹԵՌՎՆԱՅ ՎԿԱՅԻՆ,
ԵՒ ՉՈՐԻՑ ԶԻՆՈՒՐԱՑՆ՝ ԲԱՍՈՍԻ, ԵՒՍԵԲԻ, ԵՒՏԻՔԻ ԵՒ
ԲԱՍԻԼԻԴԵԱՅ**

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵԲՐԱՅԵՏԻՆԵՐՈՒՆ 12.1-7 Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանե՛նք ամէն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիւրաւ կը պաշարէ, եւ համբերութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յառենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՛նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչին վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստիլ:

Որպէսզի երբէք չյուսալքուինք եւ չտկարանանք, մտաբերեցէք՝ թէ Յիսուս ի՛նչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

Դուք նաեւ մոռցեր էք յորդորը, որ ձեզի ուղղուած է՝ իբրեւ որդիներու.-«Որդիա՛կս, մի՛ արհամարհեր Տիրոջ խրատը, եւ մի՛ վհատիր երբ քեզ հանդիմանէ, որովհետեւ Տէրը երբ կը խրատէ՝ կը նշանակէ թէ կը սիրէ քեզ. երբ կը պատժէ՝ կը նշանակէ թէ քեզ իբր զաւակ կ'ընդունի»:

Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ զաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 10.26-33 Հետեւաբար անոնցմէ մի՛ վախճաք: Չկայ ծածուկ բան որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան որ չգիտցուի: Ինչ որ մութին մէջ կ'ըսեն ձեզի՝ օր ցերեկով յայտարարեցէք, եւ ինչ որ ձեզի առանձնութեան մէջ կ'ըսեն՝ տանիքներէն բարձրաձայն քարոզեցէք: Մի՛ վախճաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն

հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցեք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքի մէջ: Երկու ճնճղուկը հինգ դահեկան չ'ա՞րժեր. եւ սակայն անոնցմէ մէկն իսկ գետին չ'իյնար առանց ձեր Զօրը գիտութեան: Գալով ձեզի, ձեր գլխուն իւրաքանչիւր մազն իսկ համրուած է: Զետեւաբար մի՛ վախնաք, որովհետեւ դուք բոլոր ճնճղուկներէն աւելի արժէք ունիք Աստուծոյ աչքին:

Ով որ մարդոց առջեւ դաւանի թէ ինծի կը հետեւի, ես ալ զայն ինծի հետեւորդ պիտի դաւանիմ Զօրս դիմաց, որ երկինքի մէջ է: Իսկ ով որ զիս ուրանայ մարդոց առջեւ, նոյնպէս ալ ես զինք պիտի ուրանամ Զօրս դիմաց, որ երկինքի մէջ է:

18 ԴՇ. ՊԱՅՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 2.1-10 Այս պատճառով ալ, պէտք է շատ աւելի ուշադիր ըլլանք վերեւ ըստածներուն, որպէսզի չըլլայ որ փրկութեան ճամբէն հեռանանք: Որովհետեւ՝ եթէ հրեշտակներու ձեռքով տրուած պատգամը անխախտելի օրէնք նկատուեցաւ, եւ անոր դէմ գործուած ոեւէ յանցանք կամ անհնազանդութիւն իր արդար պատիժը ստացաւ, ի՞նչպէս մենք կրնանք պատիժ գերծ մնալ, եթէ կարելութեամբ նկատի չառնենք այն մեծ փրկութիւնը, որուն մասին նախ Տէրը ինք խօսեցաւ եւ որուն վկայութիւնը մեզի տուին զայն իրմէ լսողները: Աստուած ինք ալ այդ փրկութեան իր վկայութիւնը տուաւ՝ նշաններով ու հրաշքներով, բազմատեսակ սքանչելիքներով եւ Սուրբ Զոգիին պարգեւներովը, ինչպէս որ ինք կամեցաւ:

Արդարեւ, Աստուած հրեշտակներուն իշխանութեան չենթարկեց գալիք աշխարհը, որուն մասին կը խօսինք: Այդ մասին սաղմոսագիրը տեղ մը կ'ըսէ.- *«Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն. ի՞նչ է մարդ արարածը, որ հոգածութիւն ցոյց կու տաս անոր: Զայն հրեշտակներէն քիչ մը վար դասեցիր, փառքով ու պատուով զայն պսակեցիր: Քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, եւ ամէն ինչ անոր իշխանութեան ենթարկեցիր»:*

Արդ, «ամէն ինչ անոր իշխանութեան ենթարկեց» ըսելով կը հասկնայ՝ թէ չմնաց բան մը որ անոր չենթարկուեցաւ: Բայց ներկայիս մենք ամէն ինչ մարդուն ենթարկուած չենք տեսներ

տակաւին: Մինչդէռ «փառքով ու պատուով» պսակուած կը տեսնենք Յիսուսը, որ «հրեշտակներէն քիչ մը վար» դասուեցաւ՝ մահուան չարչարանքը յանձն առնելու համար, որպէսզի Աստուծոյ շնորհքով բոլոր մարդոց փոխարէն մահը ճաշակէ: Որովհետեւ Աստուած, որ իրեն համար ստեղծեց եւ իրմով կը պահէ ամէն ինչ, իր բոլոր որդիները մասնակից դարձնելու համար իր փառքին՝ յարմար գտաւ, որ զանոնք փրկութեան առաջնորդողը՝ Յիսուս ինք օրինակը տայ չարչարանքներէն անցնելով կատարելութեան հասնելու:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17.11-19

Դէպի երուսաղէմ իր ճամբուն վրայ, Յիսուս կ'անցնէր Սամարիայի եւ Գալիլեայի սահմաններէն: Եւ մինչ գիւղ մը կը մտնէր, իրեն հանդիպեցան տասը բորոտներ, որոնք հեռուն կեցան եւ բարձր ձայնով ըսին.- Յիսուս վարդապետ, ողորմէ՛ մեզի: Յիսուս տեսաւ զանոնք եւ ըսաւ.- Գացէք եւ դուք ձեզ քահանաներուն ցոյց տուէք:

Եւ մինչդէռ կ'երթային, արդէն իսկ մաքրուեցան: Անոնցմէ մէկը երբ տեսաւ որ բժշկուեցաւ, վերադարձաւ եւ սկսաւ բարձրաձայն զԱստուած փառաւորել: Երեսին վրայ գետին փռուեցաւ Յիսուսի ոտքերուն առջեւ եւ շնորհակալութիւն կը յայտնէր անոր: Եւ անիկա Սամարացի մըն էր:

Յիսուս հարցուց.- Տասը հոգի չէի՞ն մաքրուողները. ո՞ւր են մնացեալ իննը հոգիները: Բացի այս օտարականէն ուրիշ մէկը չգտնուեցա՞ւ, որ դառնար եւ փառք տար Աստուծոյ:

Ապա Սամարացիին դառնալով ըսաւ.- Ոտքի ել եւ գնա՛, հաւատքդ քեզ փրկեց:

19 ԵՇ. ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑՆ՝ ԻՆԴՈՍԻ ԵՒ ԴՈՄՆԱՅԻ, ԳՂԵՐԻԿՈՍԻ ՔԱՅԱՆԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՈՒՑ ԲԻՒՐՈՒՅՆ ՈՐՔ ԱՅՐԵՑԱՆ ՅԵԿԵՂԵՑԻՆ ՆԻԿՈՍԻԴԱՑԻՈՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՌԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ 4.12-19 Սիրելիներ, տարօրինակ մի՛ համարէք ոեւէ փորձութիւն, որ կրակի պէս կ'այրէ ձեզ: Անբնական բան մի՛ համարէք զայն, այլ՝ Քրիստոսի չարչարանքներուն մասնակցութիւն նկատեցէք եւ ուրախացէք, որպէսզի երբ Քրիստոս իր փառքով յայտնուի՝ նոյնպէս ցնծութեամբ ուրախանաք: Եթէ

Քրիստոսի անունին համար նախատուիք՝ երանելի էք, որովհետեւ կը նշանակէ՝ թէ Աստուծոյ փառաւորիչ Յոգին ձեր վրայ հանգչած է: Խօսքս անոնց մասին չէ, որոնք կը չարչարուին իբրեւ մարդասպան կամ գող, իբրեւ չարագործ կամ խառնակիչ: Բայց ով որ քրիստոնէայ ըլլալուն համար կը չարչարուի՝ թող չամչնայ, այլ՝ իր այդ անունով զԱստուած փառաւորէ: Որովհետեւ արդէն ժամանակն է որ դատաստանը սկսի, եւ սկսի Աստուծոյ տունէն: Իսկ եթէ առաջին դատուողները մենք պիտի ըլլանք, ի՞նչ պիտի ըլլայ վախճանը անոնց՝ որոնք Աստուծոյ Աւետարանին չեն հնազանդիր: *«Եթէ արդարը հազիւ կը փրկուի, անհաւատն ու մեղաւորը ի՞նչ պիտի ըլլան»:* Ուստի, անոնք որ Աստուծոյ կամքին համաձայն կը չարչարուին, թող շարունակեն բարեգործութիւն ընել եւ իրենց հոգիները յանձնեն Ստեղծիչին, որ իր խոստումներուն հաւատարիմ է:

ԱԷՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ 15.17-25 Դարձեալ կը պատուիրեն ձեզի, սիրեցէք իրար:

Եթէ աշխարհը ձեզ կ'ատէ, գիտցէք որ նախ զիս ատեց: Եթէ այս աշխարհին պատկանած ըլլայիք՝ աշխարհը ձեզ պիտի սիրէր, որպէս իրմէ եղող մէկը: Բայց աշխարհը ձեզ կ'ատէ, որովհետեւ ես ձեզ այս աշխարհէն զատեցի, եւ դուք այս աշխարհին չէք պատկանիր այլեւս: Յիշեզէ՛ք այն խօսքը որ ըսի ձեզի, թէ «Ծառան իր տիրոջմէ աւելի մեծ չէ»: Եթէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն. եթէ իմ խօսքերս գործադրեցին, ապա ձերն պիտի գործադրեն: Բայց այս բոլորը ձեզի պիտի ընեն իմ անունիս պատճառով, որովհետեւ զիս ղրկողը չեն ճանչնար: Եթէ աշխարհ եկած չըլլայի եւ խօսած չըլլայի իրենց, մեղք պիտի չունենային. բայց հիմա իրենց մեղքին համար ոեւէ արդարացում չունին: Ով որ զիս կ'ատէ, իմ Հայրս ատած կ'ըլլայ: Եթէ իրենց մէջ կատարած չըլլայի այնպիսի գործեր, որոնք ուրիշ ոչ ոք ըրած է, անոնք մեղք պիտի չունենային: Սակայն ահա անոնք տեսան իմ գործերս եւ ատեցին թէ՛ զիս եւ թէ՛ Հայրս: Արդ, կը կատարուի իրենց Օրէնքին մէջ գրուածը, որ կ'ըսէ *«Ձիս ատեցին՝ առանց ոեւէ պատճառի»:*

20 ՈՒՐ. ՊԱՅՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 3.12- -4.10 Զգուշացէ՛ք, եղբայրներ, չըլլայ որ ձեզմէ՛ ոեւէ մէկը սիրտով չարանայ եւ անհաւատութեամբ մերժէ ճանչնալ զԱստուած, կեանքի աղբիւրը: Այլ, որքան ատեն որ Սուրբ գիրքին ըսած «Այսօր»ը ձեզի եւս կը վերաբերի՝ յորդորեցէ՛ք իրար ամէն օր, որպէսզի ոեւէ մէկը մեղքերէ տարուելով իր սիրտը չփակէ Աստուծոյ դիմաց. որովհետեւ այլեւս Քրիստոսի մաս կը կազմենք, եթէ մինչեւ վերջ անխախտ պահենք սկիզբէն մեր ձեռք բերած վստահութիւնը: Ահա թէ ինչու՝ կ'ըսէ.- *«Այսօր երբ կը լսէք Աստուծոյ ձայնը, ձեր սիրտերը մի՛ փակէք, ինչպէս անցեալին անոր դէմ ընքոստացաք»:*

Որո՞նք էին որ Աստուծոյ ձայնը լսեցին բայց ընքոստացան անոր դէմ. Մովսէսի առաջնորդութեամբ Եգիպտոսէն ելած ձեր հայրերը չէի՞ն: Աստուած որմէ՞ զզուեցաւ քառասուն տարիներ շարունակ. անոնցմէ չէ՞ր, որոնք յանցանք գործեցին իր դէմ եւ որոնց ոսկորները տարտղնուեցան անապատին մէջ: Որո՞նց համար երդում ըրաւ, որ պիտի չմտնեն այն երկիրը, ուր իրենց հանգիստ մը պատրաստած էր, եթէ ոչ անոնց՝ որոնք անհնազանդ գտնուեցան իրեն: Եւ կը տեսնենք որ իրապէս չկրցան մտնել, իրենց անհաւատարմութեան պատճառով:

Հետեւաբար, մինչ Աստուծոյ կողմէ՝ իր պատրաստած հանգիստը մտնելու խոստումը ի գօրու կը մնայ, չափազանց զգոյշ ըլլանք որ ոեւէ մէկը անկէ չզրկուի: Որովհետեւ մեզի՛ եւս այդ աւետիսը տրուած է, ճիշդ ինչպէս անապատին մէջ եղողներուն տրուեցաւ: Բայց աւետիսը լսելը օգուտ չըրաւ անոնց, որովհետեւ հաւատքով չկապուեցան իրենց լսածին: Սակայն մենք, հաւատացողներս, պիտի մտնենք հանգիստը, որուն մասին Աստուած ըսաւ.- *«Այնպէս որ, բարկութեանս մէջ երդում ըրի՝ ըսելով. "Երբեք պիտի չմտնեն այն երկիրը ուր հանգիստ մը պատրաստած եմ իրենց համար"»:*

Այսպէս ըսաւ, հակառակ անոր՝ որ իր գործերը աւարտած էր ստեղծագործութեան ատենէն: Որովհետեւ Սուրբ գիրքերուն մէջ տեղ մը եօթներորդ օրուան համար կ'ըսէ. *«Եւ եօթներորդ օրը Աստուած իր բոլոր գործերը աւարտելէ ետք՝ հանգչեցաւ»:* Իսկ այստեղ դարձեալ կ'ըսէ. *«Երբեք պիտի չմտնեն այն երկիրը ուր հանգիստ մը պատրաստած եմ իրենց համար»:*

Արդ, որովհետեւ այդ աւետիսը առաջին լսողները Աստուծոյ պատրաստած հանգիստին չհասան, իրենց անհնազանդութեան

պատճառով, եւ քանի դեռ ի զօրու կը մնայ այդ հանգիստը պարգեւելու խոստումը, Աստուած ուրիշ օր մը կը սահմանէ, եւ ատիկա կ'արտայայտէ՝ երբ Դաւիթի բերնով «Այսօր» ըսելով կը խօսի այնքան ժամանակ ետք, այն խօսքին մէջ՝ որ վերել մէջբերուեցաւ.-

«Այսօր երբ լսէք Աստուծոյ ձայնը, ձեր սիրտերը մի՛ փակէք»:

Արդարեւ, եթէ Յեսու գիրենք խոստացուած հանգիստին հասցուցած ըլլար՝ Աստուած անկէ ետք այլեւս ուրիշ օրուան մասին պիտի չխօսէր: Հետեւաբար, դեռ ուրիշ «հանգիստ օր» մը կայ, որ Աստուծոյ ժողովուրդին կը սպասէ: Որովհետեւ Աստուծոյ պատրաստած հանգիստին հասնողը անոր օրինակով պիտի հանգչի իր գործերը աւարտելէ ետք, ինչպէս Աստուած ալ իր բոլոր գործերը աւարտելէ ետք «հանգչեցաւ»:

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 18.1-8

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու: Եւ ըսաւ.- Քաղաքի մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծոմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. "Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս":

Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. "Թէեւ Աստուծոմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեն, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ":

Ապա Տէրը շարունակեց.- Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանե՞ զանոնք, որոնք գիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեն ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնե՞ երկրի վրայ:

21 ՇՐ. ՍՐԲՈՅՆ ԱՐԳԱՐՈՒ ՆԱԽԱՎԿԱՅ ԹԱԳԱԴՈՐԻՆ ՄԵՐՈՅ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ՏԻՄՈԹԵՈՍԻՆ 2.1-7 Արդ, ամեն բանն առաջ կը խնդրենմ որ աղօթք, խնդրանք, պաղատանք եւ գոհութիւն մատուցանէք բոլոր մարդոց համար, մանաւանդ թագաւորներուն եւ իշխանութեան գլուխ գտնուող բոլոր մարդոց համար, որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կատարեալ աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ. որովհետեւ այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը, որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան ճանաչումին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ եւ մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս մարդը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար: Ատոր վկայութիւնը Աստուած տուաւ իր ատենին, եւ նոյն այդ վկայութիւնը տալու համար է որ ես ալ քարոզիչ եւ առաքեալ կարգուեցայ, քրիստոնէական հաւատքը եւ ճշմարտութիւնը սորվեցնելու համար բոլոր հեթանոսներուն: Եւ Քրիստոս ինք վկայ է՝ թէ ճշմարտութիւնը կ'ըսեն, առանց ստելու:

ԱԻԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 7.1-10 Յիսուս ժողովուրդին իր բոլոր ըսելիքները վերջացնելէ ետք Կափառնաուն գնաց: Զոն Զոռմայեցի հարիւրապետ մը կար, որուն ծառան, որ շատ սիրելի էր իրեն, մահամերձ հիւանդ էր: Զարիւրապետը երբ լսեց Յիսուսի մասին, քանի մը Զրեայ երեցներ դրկեց անոր, խնդրելով որ գայ եւ փրկէ ծառան: Երեցները եկան Յիսուսի մօտ եւ թախանձագին խնդրելով, ըսին.- Արժանաւոր մէկուն է որ բարիք պիտի ընես. անկա մեր ազգը կը սիրէ եւ ինքն էր որ մեզի համար ժողովարան շինեց: Յիսուս անոնց հետ գնաց: Երբ մօտեցած էր տան, հարիւրապետը իր բարեկամները դրկեց, որպէսզի անոր ըսեն.- Տէ՛ր, մի՛ յոգնիր. ես արժանի չեմ քեզ իմ յարկիս տակ ընդունելու. ահա թէ ինչո՛ւ ինքզինքս արժանի չգտայ քեզի գալու: Միայն հրահանգ մը տուր եւ ծառան պիտի առողջանայ: Որովհետեւ ես ալ, որպէս իշխանութեան ենթակայ մարդ մը՝ ձեռքիս տակ զինուորներ ունիմ. մէկուն կ'ըսեն՝ «Գնա» եւ կ'երթայ, ուրիշի մը կ'ըսեն՝ «Եկո՛ւր» եւ կու գայ. ծառայիս կ'ըսեն «Ատիկա ըրէ» եւ կը կատարէ:

Յիսուս երբ լսեց ասիկա, հիացաւ անոր վրայ, եւ դառնալով իրեն հետեւող բազմութեան, ըսաւ.- Իրապէ՛ս կ'ըսեմ ձեզի, թէ նոյնիսկ Իսրայէլի մէջ այսչափ հաւատք չգտայ:

Պատգամաւորները տուն վերադարձան եւ հիւանդ ծառան բժշկուած գտան:

22 ԿԻՐ. Ե. ԿԻՐԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ 40.18-31 Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք:

Կուռքի՞: Բայց ծուլագործն է որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար:

Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու:

Այնքան տգէ՛տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմները դրաւ:

Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունտէն այնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ան է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար:

Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ:

Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած:

Երկինք բարձրացուցէք ձեր աչքերը եւ դիտեցէ՛ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Այնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ ոեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն:

Ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ Յակոբ, կամ ինչո՞ւ կը մտածես, ո՞վ Իսրայէլ, ըսելով. «Տէրը իմ վիճակս չտեսաւ, իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ»:

Չե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի սահմանները ստեղծեց. որ ո՛չ կը յոգնի եւ ո՛չ կը թուլնայ, եւ անքննելի է անոր իմաստութիւնը:

Ինքն է որ ոյժ կու տայ յոգնածին, կը զօրացնէ տկարացածը:
Նոյնիսկ երիտասարդները պիտի յոգնին ու թուլնան, եւ կտրիճները՝
յուսալքուին, բայց Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի
վերանորոգեն եւ արիւծներու պէս թեւ ու թռիչք ունենան. պիտի
վազեն առանց թուլնալու, պիտի քալեն առանց յոգնելու:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 4.16- -5.10 Այսուհետեւ համարձակօրէն
մօտենանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու
համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան
պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի,
պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ
մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ
մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ
մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց,
քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ
ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար
պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի՝ կրնար ինքն իրեն
քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ զայն այդ
պաշտօնին կը կանչէ, ճիշդ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ
Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ
զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. *«Դուն իմ սիրելի Որդիս ես,
այսօր քեզ ծնայ»*, իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. *«Դուն յաւիտեան
քահանայ ես, Մելքիսեդէկ քահանային պէս»*:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու
արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուրնէ
փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր ան եւ
հնազանդ: Թէպէտ աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու
փորձառութեամբ սորվեցաւ թէ ինչ բան է հնազանդութիւնը: Եւ
այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտեանական փրկութեան
պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին,
քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդէկ
քահանային պէս:

ԱԻԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 18.9-14 Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. *”Աստուած իմ, շնորհակալ եմ քեզի՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ”*:

Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. *”Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը”*:

Կ'ըսեն ձեզի,- եզրակացուց Յիսուս,- ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»: